ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 59

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30-ը ապրիլի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ.Ս.Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա.Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին:
   /Զեկուցող ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**/
2. ԵՊՀ ԻՄ «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի (նոր խմբագրությամբ)» հաստատում:
   /Զեկուցող ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**/
3. Ընթացիկ հարցեր
   3.1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգ»-ի հաստատում:
   /Զեկուցող ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ **Ն. Գրիգորյան**/
   3.2. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգ»-ի հաստատում:
   /Զեկուցող ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ **Ն. Գրիգորյան**/
   3.3. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի անցկացման կարգի (նոր խմբագրությամբ)» հաստատում:
   /Զեկուցող ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**/
   3.4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառուցվածքը հաստատելու մասին:
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան**/

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ.Ճաղարյանի հաղորդումը .

Մ. Ճաղարյանը նշեց, որ 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում տարբեր կրթական ծրագրերով մասնաճյուղի 4 ֆակուլտետների 16 կուրսերում՝ 27 մասնագիտական դասընթացների շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, ուսանողների կրթական կարիքների վերհանման շրջանակներում, հարցման միջոցով ուսումնասիրվել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 16 կուրսերի 56 ուսանողներ: Հետազոտության արդյունքների համեմատության և առավել իրական պատկեր ստանալու համար, հարցում է իրականացվել նաև հետազոտական աշխատանքները ղեկավարած դասախոսների շրջանում, որին մասնակցել են հետազոտական աշխատանքներ ղեկավարած 19 դասախոսներ:

Նշվեց, որ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են հետազոտական աշխատանքի իրականացումից:

Այնուհետև ամփոփելով հետազոտական աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների և դասախոսների բավարարվածության հարցման արդյունքները, Մ. Ճաղարյանը հստակեցրեց առկա խնդիրները, բաժնի առաջարկները և գործողությունների պլանը խնդիրների լուծման վերաբերյալ, որոնք մանրամասն կարող եք տեսնել Մ.Ճաղարյանի ամբողջականն զեկույցում (տես հավելված 1):

Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների և ղեկավարների բավարարվածության հարցման արդյունքները ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ. Ավագյանը, և այլոք:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպումների ժամանակ վերոհիշյալ խնդիրները մասամբ ներկայացվել են նրանց, սակայն անհրաժեշտ է կազմակերպել լրացուցիչ հանդիպումներ ամբիոնի վարիչների, դասախոսների, ինչպես նաև ուսանողների հետ ավելի մանրամասն քննարկումների համար՝ առկա հակասությունները վերացնելու

համար։ Հակասությունները մասամբ կվերանան նաև ԵՊՀ ԻՄ-ում ինքնուրույն աշխատանքների կատարման կարգը ընդունելուց հետո։

Նշեցին նաև, որ խմբային աշխատանքների դեպքում օբյեկտիվ գնահատումը բավականին բարդ խնդիր է, որը կարող է անդրադառնալ ռոտացիայի օբյեկտիվության վրա։

Կարևորեցին նաև ՈՒԽ-ը և ՈՒԳԸ-ը կազմակերպեն հանդիպում-քննարկումներ ուսանողների լայն շրջանակների հետ։ Վ. Ավագյանը նշեց, որ անծանոթ՝ ծրագրով չնախատեսված նյութերը ուսանողները դժվարությամբ են յուրացնում։

Իսկ ուսանողները նշեցին, որ լինում են դեպքեր երբ ուսանողներիի կողմից ներկայացված կարծիքները տվյալ նյութի վերաբերյալ չեն ընդունվում դասախոսների կողմից։

Որոշեցին.

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին հաղորդումն ընդունել **ի գիտություն**։

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատում ›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ 2022թ. ապրիլի 7-ի ԵՊՀ Գիտական խորհրդի նիստով հաստատվել է «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը։ Նոր կարգը, որը գործելու է 2022-2023 ուսումնական տարվանից ընդունված ուսանողների համար, մեր կողմից տեղայնացվել է, կատարվել են հետևյալ փոփոխությունները՝ ավելացվել է «Իջևանի մասնաճյուղ»-ը, «ռեկտոր»-ը փոխարինվել է «տնօրեն»-ով, «պրոռեկտոր»-ը՝ «փոխտնօրեն»-ով, գործընթացների համար պատասխանատու համալսարանական ստորաբաժանումների անվանումները փոխարինվել են մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումներով։

Ա. Դավթյանը նշեց, 2-4 կուրսերի ուսանողների համար գործող «ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ի հետ համեմատած կան սկզբունքային տարբերություններ, մասնավորապես.

1) ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրի աշխատա-ծավալը կետում ավելացվել է մագիստրոսի կրթական ծրագրի 90 և 60 կրեդիտ աշխատածավալը, դրա հիմա վրա նաև ուսումնառության 1.5 և 1 տարի տևողությունը,
2) Կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգի կետում ունենք փոփոխություններ,

3) 24 ենթակետում՝ ուսանողը կարող էր ընտրել 3 դասընթաց, այժմ ընտրում է 2-ը,
4) 26 ենթակետում նախատեսվում է «շարժունության պատուհան» 15 կրեդիտ աշխատածավալով առկա ուսուցման համակարգում 7-րդ կիսամյակում, իսկ հեռակա ուսուցման համակարգում 9-րդ կիսամյակում:
5) 27 ենթակետում չի նշվում թե քանի դասընթաց է ընտրում ուսանողը
6) 29 ենթակետում ավելացվել է 90 կրեդիտ տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրի կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցման ժամանակահատվածը:
7) 5-րդ կետը ավելացել է՝ Հետազոտական աշխատանքի պատրաստումը և գնահատումը:
8) Գնահատման դրական նվազագույն շեմը նախորդի 8 միավորի փոխարեն սահմանվել է 10 միավոր:
9) Փոխվել է գնահատման արդյունարար միավորի սանդղակը.

   18-20՝ *«Գերազանց»*
   14-17՝ *«Լավ»*
   10-13՝ *«Բավարար»*
   0-9՝ *«Անբավարար»*

   Ըստ քննական ձևերի փոփոխվել են նաև գնահատման բաղադրիչները:
10) 59 ենթակետում՝ լաբորատոր աշխատանքների դեպքում կատարողականի 60%-ը փոխարինվել է 70%-ի:
11) 7-րդ կետում՝ փոփոխություն է քննությունների վերահանձնման և դասընթացների կրկնումը:
12) 83 և 84 ենթակետում՝ առանց եզրափակիչ գնահատման և առանց ընթացիկ քննությունների գնահատման բաղադրիչների վերահանձնում չի թույլատրվում:
13) 85. ենթակետում՝ բոլոր տեսակի դասընթացների համար սահմանված բոլոր բաղադրիչներից կիսամյակի ընթացքում 0 միավոր ստացած ուսանողը զրկվում է դրական միավորի հնարավորությունից, իսկ տվյալ դասընթացը համարվում է առարկայական պարտք,
14) 86 ենթակետում՝ բոլոր բաղադրիչներից կիսամյակի ընթացքում 0 միավոր ստացած ուսանողը կարող է մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը վճարովի հիմունքներով պետք է կրկնի դասընթացը և հանձնել քննությունները,
15) 92 ենթակետում՝ ավարտական աշխատանքի պաշտպանությանը չներկայացած կամ «անբավարար» գնահատված ուսանողը կարող է պաշտպանել նույն՝ նախկինում հաստատված կամ նոր հաստատված թեմայով:

16) 107 ենթակետում՝ կրթական ծրագրի ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան,
17) 111 ենթակետում՝ կրթական ծրագիրն իրականացնող դասախոսական կազմը համաձայնեցվում է կրթական ծրագրի ղեկավարի հետ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը և այլոք։

Մասնավորապես Մ. Ճաղարյանը նշեց, որ կարգի 5-րդ աղյուսակը, որը վերաբերվում է մասնակցության համար հատկացվող միավորներին, մասնավոր դեպքի համար է և պետք է լինի ավելի ընդհանրական, Լ. Բեգինայանը նշեց, որ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում **101-րդ կետը՝** «Մասնագիտությամբ աշխատող հեռակա ուսումնառության ուսանողն ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք։», անհրաժեշտ է փոխարինել պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի **17-րդ կետի** ձևակերպումով.

«Մասնագիտությամբ աշխատող ուսանողը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել իր աշխատավայրում՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք։», որպեսզի հակասություններ չլինեն երկու կարգերի միջև։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ շարժունակության հետ կապված կարող են լինել ռիսկեր տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ քանակով կրեդիտներ հավաքելու գործում։ Ա. Մակարյանն առաջարկեց հստակեցնել աղյուսակ 5-ը և հաստատել կարգը՝ համաձայն հավելված 3-ի։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 59/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»՝ համաձայն հավելված 3-ի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Ընթացիկ հարցեր։

3.1. Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ (ԳԽ ՈԿ) Ն. Գրիգորյանի հաղորդումը:

Նշվեց, որ «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման»կարգը, որը մշակվել է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կողմից, քննարկվել է նաև Որակի կառավարման մշտական հանձնաժողովի մարտի 30-ի նիստում: Կարգը մշակվել է ղեկավարվելով՝ ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի՝ (ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ) 1.2.խնդրի 6-րդ կետի և ԵՊՀ ԻՄ –ի 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի՝ (Բարձրորակ կրթություն) 1.2. խնդրի 7-րդ կետի իրականացման հանձնարարությունից:

Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների ինքնուրույն աշխատանքների նպատակը, խնդիրները, ձևերը և ինքնուրույն աշխատանքների կազմակերպչական-մեթոդական ապահովման սկզբունքները: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և կատարման կարգը մշակված է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությունների, «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» հիման վրա:

Կարգում ներկայացված է ուսանողի ինքնուրույն աշխատանքի նպատակները, խնդիրները, կատարման սկզբունքները և տեսակները, ուսանողների ինքնուրույն աշխատանքների պլանավորումը**,** ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպչական-մեթոդական ապահովումը, ուսանողների պարտականությունները և իրավունքները, ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգման համակարգը, սույն կարգի հաստատման և փոփոխության կարգը:

Ներկայացված նախագիծը կարող եք տեսնել հավելված 4-ում:

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը և այլոք: Արտահայտվողները կարևորեցին ինքնուրույն աշխատանքների կանոնակարգման գործընթացը և նշեցին, որ այս բացը կար կրեդիտային համակարգի ներդրումից հետո:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 59/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգը»՝ համաձայն հավելված 4-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3.2 Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական եվ ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգի հաստատում›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Գրիգորյանի հաղորդումը:

Նա նշեց, որ «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման» կարգը մշակվել է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կողմից, քննարկվել Որակի կառավարման մշտական հանձնաժողովի 2022թ. մարտի 30-ի նիստում:

Կարգը մշակվել է ղեկավարվելով՝ ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի 4-րդ նպատակի՝ (Մարդկային որակյալ ռեսուրսներ) 4.2 խնդրի (Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգեր աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգ) և ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026թթ.զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի՝ 1.4.3. խնդրի (Պարբերաբար իրականացնել ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի վերապատրաստումներ՝ հիմնված կարիքների գնահատման վրա և համահունչ ԵՊՀ ԻՄ զարգացման գերակայություններից) իրականացման հանձնարառությունից:

Կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի (այսուհետ՝ աշխատակիցների) ատեստավորման ընթացակարգը:

Կարգը մշակված է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության, ԵՊՀ ԻՄ-ի (2022-2026թթ) զարգացման ռազմավարական ծրագրի ու ներքին կարգապահական կանոնների հիման վրա:

Կարգում ներկայացված են ատեստավորման նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը, ատեստավորման երկու ձևերը՝ փաստաթղթային և թեստային եղանակները, թեստավորման արդյունքների ամփոփումը,

ատեստավորման արդյունքների ամփոփումը, կարգի հաստատման և փոփոխության կարգը (տես հավելված 5)։

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ա. Դավթյանը, Վ. Աղաբաբյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Արտահայտվողները կարևորեցին այս փաստաթղթի առկայությունը և առաջարկեցին հաստատել։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 59/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգը»՝ համաձայն հավելված 5-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3.3 Լսեցին ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի կարգի (նոր խմբագրությամբ) հաստատում» հարցի վերաբերյալ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Նա ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստում հաստատված «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի անցկացման կարգ»-ում առաջարկվող փոփոխությունները։

Մասնավորապես, հստակեցվել են հավելվածները և նրանց հղումները:

«3.1. Ներքին աուդիտի միջավայրն ընդգրկում է ներքին աուդիտի ենթակա բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու գործընթացները», ձևակերպվել է հետևյալ կերպ՝ «3.1.Ներքին աուդիտի միջավայրն ընդգրկում է Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող բոլոր գործընթացները, առաջադրանքները և ծրագրերը»։

«4.2.Ներքին աուդիտի անցկացման պարբերականությունը որոշում է մասնաճյուղի ղեկավարությունը, առնվազն տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր ստորաբաժանման համար: Ներքին աուդիտ կարող է անցկացվել նաև սահմանված ժամանակացույցից դուրս՝ պայմանավորված՝

1) գործընթացների և նրանց արդյունքների անհամապատասխանությամբ,
2) կրթական ծառայությունների փոփոխություններով,
3) մասնաճյուղի կառուցվածքային կամ կառավարման համակարգերի, հիմնարար փաստաթղթերի փոփոխություններով,

4) շահակիցների դժգոհությունների թվով ու լրջությամբ,

5) ստորաբաժանման ղեկավարի պահանջով»

ձևակերպվել է.

«4.2. Յուրաքանչյուր ստորաբաժանման, գործընթացի և ծրագրի ներքին աուդիտի անցկացման պարբերականությունը որոշում է մասնաճյուղի տնօրենը՝ ներքին աուդիտի հանձնաժողովի հետ միասին։

4.3. Աուդիտի հանձնաժողովը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին կազմում է Աուդիտի ծրագիր և նրա իրականացման պլան-ժամանակացույց (***Հավելված 3***) և ներկայացնում տնօրենի հաստատմանը։

4.4.Ներքին աուդիտ կարող է անցկացվել նաև սահմանված ժամանակացույցից դուրս՝ պայմանավորված՝

1) Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների համալրման արդյունքում գրանցված ցածր ցուցանիշների առկայությամբ,

2) Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման կամ Մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման արդյունքում բացահայտված խնդիրների առկայությամբ,

3) գործընթացների և նրանց արդյունքների անհամապատասխանությամբ,

4) կրթական ծառայությունների փոփոխություններով,

5) Մասնաճյուղի կառուցվածքային կամ կառավարման համակարգերի, հիմնարար փաստաթղթերի փոփոխություններով,

6) շահակիցների արձագանքներով,

7) ստորաբաժանման ղեկավարի պահանջով: »

Ավելացվել են նոր կետեր, և հավելվածներ։ Խմբագրված կարգը կարող եք տեսնել հավելված 6-ում։

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք։

Առաջարկվեց տեղերով փոխել 4.7 և 4.8 կետերը, իսկ ամբիոնների աուդիտները անցկացնել հունիսի վերջին։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 59/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի անցկացման կարգը (նոր խմբագրությամբ)»՝ համաձայն հավելված 6-ի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 7/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի կարգը»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3.4 Լսեցին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառուցվածքը հաստատելու մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանի հաղորդումը**:**

Նա նշեց, որ հետևելով ԵՊՀ-ի ռեկտոր Հ.Հովհաննիսյանի՝ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում իրականացնելու լիազորություններ սահմանելու մասին հրամանին՝ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարի կողմից տրվել է նմանատիպ հրաման, որի համաձայն՝ կառուցվածքային սխեմայում կատարվել են փոփոխություններ՝ ըստ տնօրենի և փոխտնօրենի ենթակայության ոլորտների:

Արտահայտվեցին Վ. Աղաբաբյանը, Ա. Դավթյանը և այլոք:

Առաջարկվեց Կիրառական արվեստի ֆակուլտետի 2 արվեստանոցը (Քանդակի և Փայտի գեղարվեստական մշակման) տեղափոխել մյուս ամբիոնի (Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի) ենթակայության տակ, ՈՒՄՎ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի անվանման մեջ ավելացնել «վերահսկման» բառը:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 59/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառուցվածքը համաձայն հավելված 7-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ